

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի Գործադիր տնօրեն՝ Ֆիամետա Հակոբյանը, Գլխավոր հաշվապահ՝ Հովհաննես Իսկաջյանը, Փոխտնօրեն՝ Գագիկ Մինասյանը, Իրավախորհրդատու՝ Արմեն Հակոբյանը սույնով հայտարարում ենք այն մասին, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել է կամ առնչվում է ընկերությունը:

Գործադիր տնօրեն

Ֆիամետա Հակոբյան

Գլխավոր հաշվապահ

Հովհաննես Իսկաջյան

Տարեկան զեկույց

2021թ. ընթացքում Ընկերության կողմից իրականացված գործունեության վերաբերյալ Ձեկուցող Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի Գործադիր տնօրեն Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյան

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի բաժնետոմսերը դասվում են որպես հասարակ, անվանական բաժնետոմսեր, ներկայումս դրանք ոչ փաստաթղթային ձևի են: Քանակը կազմում է 222183 հատ: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 4000 հայկական դրամ: Բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները և պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ և «Բաժնետիրական Ընկերությունների մասին» ՀՀ օրենքով: Բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտականությունների գրանցումը կատարում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ – ն:

Կանոնադրական կապիտալի չափը կազմում է 888732000 դրամ: Կանոնադրական կապիտալը 100 տոկոսով ձևավորված է սովորական բաժնետոմսերից, որոնց քանակը կազմում է 222183 հատ: Մասնակիցների կողմից իրենց պատկանող արժեթղթերի դիմաց վճարման պարտավորությունը 100 տոկոսով կատարված է:

Ընկերությունը հիմնականում զբաղվում է ալկոհոլային խմիչքների արտադրությամբ և վաճառքով: Առավել կարևորվում են շամպայն գինիների, օղու և կոնյակների արտադրության ոլորտները, որոնց զարգացման հիմնական ուղղությունները կայանում են նոր տեխնոլոգիաների կիրառման, արդի սարքավորումների ձեռք բերման և օգտագործման մեջ:

Արտադրանքը սպառվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում: Ընկերությունը իր արտադրատեսակներով ներքին շուկայում զբաղեցնում է կայուն դիրք: Արտադրանքի վաճառքը իրականացվում է տարբեր առևտրային կետերին մատակարարելու միջոցով, սակայն դրանցից ոչ մեկը որպես խոշոր սպառող չի դիտվում, ինչպես նաև Ընկերության ֆիրմային խանութի միջոցով: Արտաքին շուկայում Ընկերության արտադրանքը հիմնականում սպառվում է Ռուսաստանի Դաշնությունում:

Հիմնական մրցակիցներ են համարվում շամպայն, գինի, կոնյակ արտադրող ընկերությունները:

Ընկերությունը չունի այնպիսի մատակարարներ, որոնց բաժին է ընկնում ապրանքանյութական արժեքների ընդհանուր մատակարարման 10 տոկոսից ավելին:

Ընկերությունը օժանդակ նյութերի, շրջանառու միջոցների ձեռք բերման համար մշտապես ունի ֆինանսական ներքուսքերի կարիք, ուստի այդ պատճառով հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը դիմել և ստացել է առևտրային նպատակային վարկեր:

Ընկերությունը 2018թ.-ից ունի հետևյալ վարկերը.

1. «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈւՎԿ ՓԲԸ –ի հետ կնքել է կնքել է գլխավոր վարկային պայմանագիր և դրան կից ենթապայմանագիր, ըստ որի ենկերությանը 36/երեսունվեց/ ամիս մարման ժամկետով, տարեկան 11 տոկոս տոկոսադրույքով, որից 4 տոկոսը վարկի տրամադրումից հետո 2 տարվա ընթացքում սուբսիդավորվում է ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից տրամադրված միջոցներով, տրամադրվել է 50.000.000 /հիսուն միլիոն/ ՀՀ դրամ վարկ, օժանդակ միջոցների համալրման նպատակով:

Որպես հաջորդող գրվաներ գրավադրվել են Ընկերության խոշոր բաժնետեր և Դիտորդ խորհրդի նախագահ՝ Հրայր Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Ագաթանգեղոսի 7 թիվ 272 տարածք հասցեում և «Ինթերնեյշնլ Էյրվեյս» ՓԲԸ-ին պատկանող ք. Երևան, Մաշտոցի պողոտա 14 շենքի թիվ 60 տարածքի հասցեում գտնվող անշարժ գույքերը: Որպես վարկի վերադարձման ապահովման միջոցներ հանդիսացել են նաև թվով երկու երաշխավորություններ՝ կնքված Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյանի և Վերսանդիկ Ֆրանսիկի Հակոբյանի հետ:

Ընկերությունը 2020թ. ընթացքում ստացել է հետևյալ վարկը.

Երևանի Շամպայն Գինիների Գործարան ԲԲԸ-ն 2020թ-ին ստացել է վարկ՝ Հայաստանի Չարգացման և Ներդրումների ՈՒՎԿ ՓԲԸ-ից Նոյեմբեր ամսին 150000000(Մեկ հարյուր հիսուն միլիոն(վարկային պայմանագիր թիվ9094634))ՀՀ դրամ, և 188000000(մեկ հարյուր ութսունութ միլիոն(վարկային պայմանագիր թիվ9093484007))ՀՀ դրամ :

Ակբա-Կրեդիտ- Ագրիկոլ բանկից 2020թ-ին ստավել ենք վարկ 134000000(մեկ հարյուր երեսունչորս միլիոն(վարկային պայմանագիր թիվ463494304/1))ՀՀ դրամի և 69000000 (վաթսուհինը միլիոն(վարկային պայմանագիր թիվ463494304/2))ՀՀ դրամի վարկ և նույն թվականին ՎՏԲ-Հայաստան Բանկից 196000000(մեկ հարյուր ինսունվեց միլիոն(վարկային պայմանագիր թիվ062-020-02Ա))ՀՀ դրամի վարկ:

Ընկերությունը 2021թ. ընթացքում ստացել է հետևյալ վարկը.

22.12.2021թ. " ՎՏԲ-Հայաստան բանկ " ՓԲԸ-ից N 062-021-01Ա վարկային պայմանագրով ստացել է վարկ 56,000 հազ. դրամ, 13.1% տոկոսադրույքով 36 ամիս ժամկետով: Վարկը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարներն ամբողջությամբ ենթակա են մարման 22.12.2024թ.՝ պայմանագրում ներկայացված ժամանակացույցի համաձայն: Վարկի տոկոսների հաշվարկը կատարվում է վարկի գումարի փաստացի օգտագործված օրերի համար, տարին ընդունելով 365 օր: 31.12.2021թ. դրությամբ մնացորդը կազմում է 56,000 հազ. դրամ:

31.12.2021թ. դրությամբ "ՎՏԲ-Հայաստան բանկ" ՓԲԸ –ի վարկի մնացորդը կազմում է 186,667 հազ. դրամ: 05.06.2018թ.-ին կնքված թիվ 909348 գլխավոր վարկային պայմանագրի ենթապայմանագիր թիվ 9093484/009 13.12.2021թ. կնքած վարկային պայմանագրով "Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա" ՈՒՎԿ ՓԲԸ-ից նախատեսվում է ստանալ 100,000 հազ. դրամ վարկ, Տարեկան 9,5% տոկոսադրույքով, 36 ամիս մարման ժամկետով: Վարկը տրամադրվում է խաղողի մթերման գծով կրեդիտորական պարտքի մարման նպատակով: 31.12.2021թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 100,000 հազ. դրամ: 2021 թվականին՝ խաղողի մթերման սեզոնի ընթացքում Ընկերությունը մթերել է շուրջ 1356.77 տոննա տեխնիկական սորտի խաղող:

Ընկերությունն ունի գործունեության իրականացման համար հատուկ լիցենզիաներ, որոնք տրված են անժամկետ:

Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանում է Կոտայքի մարզ, գյուղ Քանաքեռավանում գտնվող գինու կետը իր շենք - շինություններով և սարքավորումներով:

Թբիլիսյան խճուղի 20 հասցեում գտնվող Ընկերության գործարանի տարածքից որոշակի հատված հինգ տարի ժամկետով ամսական 360000 /երեք հարյուր վաթսուն հազար/ դրամ արժեքով վարձակալության է հանձնված «Գարանտ սերվիս» ՍՊԸ - ին:

Թբիլիսյան խճուղի 20 հասցեում գտնվող, Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող վառելիքի լիցքավորման կայանը, ամսական 75000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքով վարձակալության է հանձնված «Ֆ. Հակոբյան» ՍՊԸ - ին:

Խաղողի մթերման սեզոնային աշխատանքները կազմակերպելու նպատակով Ընկերությունը վարձակալում է Տավուշի մարզ գյուղ Դեբեդավան հասցեում գտնվող «Նոյեմբերյանի գինու գործարան» ՓԲԸ – ին պատկանող գինու կետը տարեկան 5760000 /հինգ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար/ դրամ վարձավճարով: Վարձակալության պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով:

Ընկերությունն իր գործունեության մեջ ունի ներգրավված հողատարածքներ, շենքեր, շինություններ, որոնք մեծամասնությամբ կենտրոնացված են ք. Երևան Թբիլիսյան խճուղի 20 հասցեում:

Աշխատողների միջին թվաքանակը 2021թ. ընթացքում կազմել է 160 մարդ:

Ընկերության հասարակ անվանական բաժնետոմսերի մոտավորապես մեկ ամբողջ ութ տասնորդական տոկոսը պատկանում է Ընկերության աշխատակիցներին:

Ընկերությունը չունի այնպիսի աշխատակիցներ, որոնց տարեկան վարձատրությունը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը:

Ընկերությանը հարկային արտոնություններ տրված չեն:

Ընկերության նկատմամբ հաշվետու տարվա ընթացքում դատարանի կողմից պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել:

Բոլոր տեսակի հաշվետվությունները Ընկերության կողմից ներկայացվել են գործող օրենսդրությանը համապատասխան և առանց ժամկետների խախտման: Ընկերության հաշվապահական հաշվեկշռում արտացոլված մյուս տույժ-տուգանքների գումարները գոյացել են վճարումների մասնակի ուշացումների հետևանքով:

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ պետական լիազոր մարմինների կողմից ստուգումներ իրականացվել են ՀՀ ՊԵԿ կենտրոնական ստուգումների վարչության կողմից, որի արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ընկերության 2021թ. աուդիտն իրականացրել է «Ֆոր էյ Քնսալթինգ» ՍՊԸ – ն, որը գտնվում է ք. Երևան, Նալբանդյան փող. 50/136 հասցեում, Լիցենզիա N ԱԾ 102: Աուդիտն իրականացնող անձն եկել է այն կարծիքին, որ ֆինանսական հաշվետվությունները տալիս են Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ի 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

(Աուդիտորական եզրակացության պատճենը կցվում է):

Ստորև ներկայացվում է Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի կողմից 2021թ. ընթացքում հաշվարկված և պետ. բյուջե վճարված գումարները ըստ հարկատեսակների հազ. դրամ

h/h	Հարկատեսակ	Հաշվարկվել է	Վճարվել է
1	ԱԱՀ	152310	153055
2	Ակցիզային հարկ	163810	167442
3	Եկամտային հարկ	81584	62700
4	Շահութահարկ	-	538
5	Գույքահարկ	2406	4184
6	Հողի հարկ	1858	1858
7	Բնապահպանական վճար	328	326

Ընկերության ապագա գործունեության հիմնական սկզբունքները կայանում են նոր արտադրատեսակների, տեխնոլոգիաների ներդրման, հիմնական միջոցների՝ սարքավորումների արդիականացման, վերազինման, արտադրության ժամանակակից սկզբունքների մշակման, հումքի (խաղողի, գինեմյուսի) բազայի ստեղծման մեջ: Արտադրության կարևոր նախապայմաններից մեկն է էժան, սակայն որոկյալ հումքի և օժանդակ նյութերի ձեռքբերումը, որը թույլ կտա ձևավորել ճկուն գնային քաղաքականություն, մրցակցային դաշտում ապահովել կայուն դիրք, սպառողին (ինչպես բիզնես այնպես էլ վերջնական) ներկայացնել որակյալ և մատչելի արտադրանք: Քանի որ ալկոհոլի արտադրության բնագավառում ընկերությունը բազմապրոֆիլ է, ուստի գտնվում է մշտական մրցակցության մեջ թե տեղական արտադրողների հետ, թե ներմուծող կազմակերպությունների հետ: Մրցակցային դաշտում ընկերությունն իրականացնում է բարեխիղճ և ողջամիտ քաղաքականություն և չի չարաշահում իր դիրքերը: Բիզնեսի զարգացման վրա էական ազդեցություն են ունենում ինչպես ներքին այնպես էլ արտաքին գործոնները: Ներքին գործոնների շարքին են դասվում պետության տնտեսական իրավիճակը, այն է դրամի արժեվորումը կամ արժեզրկումը, ներքին ապրանքաշրջանառությունը, սպառողի գնողունակությունը, տնտեսական զարգացման ընդհանուր մակարդակը, հարկային և մաքսային օրենսդրությունը, վարչարարությունը, մրցակցության հավասար պայմանների ապահովումը: Էական ազդեցություն ունեն նաև արտաքին գործոնները՝ այն է միջազգային տնտեսական իրավիճակը, արտաժույթների գնային տատանումները, առաքված արտադրանքի դիմաց գումարների ստացումը, որը անմիջական ազդեցություն է ունենում վերարտադրության կազմակերպման համար:

2020թ-ին COVID 2019-ի պատճառով այս տարի նկատվել է և տեղական շուկայի վաճառքի ծավալների անկում և արտահան ծավալների անկում, որի հտևանքը խիստ բացասական ազդեցություն ունեցավ ընկերության տնտեսական գործունեության վրա, և որն էլ հանգեցրեց գործարքների կտրուկ ան կ մ ան ը : Հաշվի չառնելով ներկայի համաճարակին պայմանները շարունակում ենք ուսումնասիրությունը նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունները, մասնավորապես ԱՊՀ, ԵՏՄ-ի այլ, եվրոպական և ամերիկյան մայրցամաքի երկրներ, այդ երկրների սպառողներին ընկերության արտադրանքը ներկայացնելու հիմնահարցերը:

Մշտապես պլանավորվում են զարգացման հեռանկարները, քանի որ ներկա պահին Ընկերությունը աշխատում է իր հզորության մոտ 30 տոկոսի չափով: Մշակվում են արտադրության և սպառման օպտիմալ, ճկուն տարբերակներ, որոնք կկարողանան ապահովել բիզնեսի հնարավորինս կայուն զարգացում: Սպառման ծավալների ընդլայնման նպատակով Ընկերությունը ճկուն գնային քաղաքականություն է վարում իր արտադրանքն առաջարկելով ինչպես խոշոր իրացում ապահովող ցանցերին, այնպես էլ մանրածախ վաճառակետերին, միաժամանակ ապահովելով նրանց մեջ առողջ մրցակցություն: Ընկերությունը սկզբունքային է համարում իր արտադրության մեջ հիմնականում տեղական հումքի օգտագործումը: Մասնավորապես հիմնական հումք հանդիսացող խաղողը ձեռք է բերվում հայաստանյան խաղողագործական շրջաններից՝ այն է Տավուշի, Արմավիրի, Կոտայքի մարզերից, որտեղից և ստացվում է գինեմյութը: Տարաները՝ շշերն ու արկղերը, ինչպես նաև պիտակները նույնպես ձեռք են բերվում հիմնականում տեղական արտադրողներից: Մնացած այլ օժանդակ նյութերը, որքանով որ այն հնարավոր է թե տնտեսական, թե որակական և այլ առումներով նույնպես ձեռք են բերվում տեղական արտադրողներից:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է Բաժնետերերի ընդհանուր ժողովը: Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում բոլոր այն հարցերը, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն վերապահված են միայն ժողովին:

Ընկերության դիտորդ խորհուրդը իրականացնում է ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք հանդիսանում են ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:

Ընկերության դիտորդ խորհրդի անդամներն են.

Բաժնետոմսերի քանակը %

1. Վերսանդիկ Հակոբյանը	39.1892%
2. Հրայր Հակոբյանը	38.9327 %
3. Հովհաննես Մարտիրոսյանը	-
4. Տիգրան Բեգոյանը	0.2137 %
5. Գագիկ Մինասյանը	0.4082 %
6. Սերգեյ Հակոբյանը	-
7. Արմեն Հակոբյանը	-
8. Մանուկ Դուդուկչյանը	0.3875%
9. Հակոբ Հակոբյանը	-
10. Տիգրան Ռշտունին	0.0108%

Ընկերության գործադիր տնօրենն է Ֆիամետա Հակոբյանը, ով իրականացնում է Ընկերության ընթացիկ կառավարումը: Նրա իրավունքները և պարտականությունները սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ:

Կառավարմանը մասնակցող անձանցից ազգակցական կապի մեջ են Վերսանդիկ Հակոբյանը, Հրայր Հակոբյանը, Ֆիամետա Հակոբյանը (քույր և եղբայրներ են):

Կառավարմանը մասնակցող անձանց և Ընկերության միջև շահերի բախման դեպք տեղի չի ունեցել:

Ընկերության հետ փոխկապակցված անձիք, Ընկերության սեփականատերերը:

1. Հրայր Ֆրանսիկի Հակոբյանը՝ խոշոր բաժնետեր և միաժամանակ հանդիսանում է Ընկերության Դիտորդ Խորհրդի նախագահ
2. Վերսանդիկ Ֆրանսիկի Հակոբյանը՝ խոշոր բաժնետեր և միաժամանակ հանդիսանում է Ընկերության Դիտորդ Խորհրդի անդամ
3. Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյանը՝ Ընկերության բաժնետեր է և միաժամանակ հանդիսանում է Ընկերության Գործադիր տնօրեն:

Ձեկույցը հրապարակեց

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի

Գործադիր տնօրեն

Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյան

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ
2021թ.

Տարեկան Հաշվետվություն

ԵՐԱԱՆԻ «ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 20, հեռ. 28 – 54 – 76, ֆաքս 28 – 54 – 68

էլ. փոստ info@armchampagne.am

N 06 20.04.2022թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ հասարակ, անվանական

արժեթղթերի քանակը՝ 222183 հատ

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 4000 ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

Յ. Իսկաջյան

(անուն, ազգանուն)

Գլխավոր հաշվապահ

(պաշտոն)

(ստորագրություն)

20.04.2022թ.

(ամսաթիվ)

Գ. Մինասյան

(անուն, ազգանուն)

Փոխտնօրեն

(պաշտոն)

(ստորագրություն)

20.04.2022թ.

(ամսաթիվ)

Ա. Հակոբյան

(անուն, ազգանուն)

Իրավախորհրդատու

(պաշտոն)

(ստորագրություն)

20.04.2022թ.

(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի, կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

Ֆ. Հակոբյան

(անուն, ազգանուն)

Գործադիր

տնօրեն

(պաշտոն)

(ստորագրություն)

20.04.2022թ.

(ամսաթիվ)

Կ.Տ.

Ֆինանսական հաշվետվություններ
Երևանի "Շամպայն գինիների գործարան"
ԲԲԸ

31 դեկտեմբերի 2021թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2021թ. դեկտեմբերի 31-ի Ծնթ. դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	2,139,686	2,152,210
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	5	50	50
Հետաձգված հարկային ակտիվներ	6	14,814	14,076
		<u>2,154,550</u>	<u>2,166,336</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	2,029,202	2,172,400
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	380,293	391,562
Շահութահարկի կանխավճար		202	740
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	614	6,774
		<u>2,410,311</u>	<u>2,571,476</u>
Ընդամենը ակտիվներ		<u>4,564,861</u>	<u>4,737,812</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Բաժնետիրական կապիտալ	10	888,732	888,732
Պահուստային կապիտալ	10	390,587	390,587
Կուտակված շահույթ		773,708	720,655
		<u>2,053,027</u>	<u>1,999,974</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր	12	318,284	887,005
Ֆինանսական վարձակալություն	13	3,960	-
Ակտիվներին վերաբերվող շնորհներ	11	832,128	936,145
		1,154,372	1,823,150
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր և փոխառություններ	12	1,128,088	679,019
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	229,374	235,669
Շահութահարկ		-	-
		<u>1,357,462</u>	<u>914,688</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>4,564,861</u>	<u>4,737,812</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. ապրիլի 12-ին:

Ֆիամետա Հակոբյան
Գործադիր տնօրեն

Հովհաննես Իսկաջյան
Ֆինանսական տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 2-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ		2021թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
	Ծնթ.		
Հասույթ	15	1,221,832	866,790
Վաճառքի ինքնարժեք	16	(1,019,784)	(810,962)
Համախառն շահույթ		202,048	55,828
Այլ եկամուտ	17	122,417	158,347
Իրացման ծախսեր		(130,975)	(120,467)
Վարչական ծախսեր		(107,022)	(116,420)
Այլ ծախսեր		(8,027)	(206,658)
Գործառնական գործունեությունից շահույթ		78,441	(229,370)
Ֆինանսական ծախսեր	18	(20,544)	(34,333)
Այլ ֆինանսական հոդվածներ	19	(5,582)	(26,161)
Շահույթ/վնաս մինչև հարկերը		52,315	(289,864)
Շահութահարկի գծով ծախս	20	738	10,691
Տարվա շահույթ/վնաս		53,053	(279,173)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ/վնաս դրամ	21	(239)	(126)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		53,053	(279,173)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 2-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	888,732	390,587	999,897	2,279,216
Տարվա շահույթ	-	-	(279,173)	(279,173)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	(279,173)	(279,173)
Շահաբաժիններ	-	-	(69)	(69)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	888,732	390,587	720,655	1,999,974
Տարվա վնաս	-	-	53,053	53,053
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	53,053	53,053
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	888,732	390,587	773,708	2,053,027

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 2-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ/ վնաս	53,053	(279,173)
<i>Ճշգրտումներ՝</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	17,727	23,801
Հիմնական միջոցների օտարումից վնաս	445	-
Շահութահարկի գծով ծախս	(738)	(10,691)
Ֆինանսական ծախս	20,544	34,333
Ծնորհներից եկամուտ	(104,017)	(143,454)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	5,582	26,161
Գործառնական շահույթ/(վնաս) նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(7,404)	(349,023)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(17,417)	227,856
Պաշարների փոփոխություն	143,198	(443,020)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(4,883)	(26,609)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	113,494	(590,796)
Վճարված տոկոսներ	(20,544)	(34,333)
Վճարված շահութահարկ	538	404
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<i>93,488</i>	<i>(624,725)</i>
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(5,648)	(7,266)
Ծնորհի ստացում	-	39,438
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված/ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<i>(5,648)</i>	<i>32,172</i>
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահաբաժնի հայտարարում	-	(69)
Ֆինանսական վարձակալություն, զուտ	3,960	-
Վարկեր և փոխառություններ, զուտ	(97,844)	533,765
<i>Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<i>(93,884)</i>	<i>533,696</i>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ ան/(նվազում)	(6,044)	(58,857)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(116)	(135)
Դրամական միջոցների և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	6,774	65,766
Դրամական միջոցների և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	614	6,774

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 2-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Երևանի "Շամպայն Գինիների Գործարան" բաց բաժնետիրական ընկերությունը, որը ցուցակագրված է Նասդաք Օէմ էքս Արմենիայում, գրանցվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 1995թ. սեպտեմբերի 1-ին և հանդիսանում է Երևանի "Շամպայն Գինիների Գործարան" ձեռնարկության իրավահաջորդը:

Ընկերությունը հիմնականում զբաղվում է գործունեության հետևյալ տեսակներով.

- ոգելից խմիչքների արտադրություն,
- ոգելից խմիչքների, գինիների և լիկյորների մեծածախ առք ու վաճառք,
- խաղողի մթերում և վերամշակում,
- սպիրտի արտադրություն և այլն:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Թբիլիսյան 20:

2021թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 160 մարդ (2020թ.՝ 180 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացվել են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ դեկլարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող

Էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 21-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2020թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2021թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները,
- Ձեռնարկատիրական գործունեության սահմանումը (ՖՀՄՄ 3 փոփոխություններ),
- Էականության սահմանումը (ՀՀՄՄ 1 և ՀՀՄՄ 8 փոփոխություններ),
- Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (ՖՀՄՄ 9 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ),
- COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ (ՖՀՄՄ 16 փոփոխություններ)

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2)» (ՖՀՄՄ 9, ՀՀՄՄ 39, ՖՀՄՄ 16, ՖՀՄՄ 4 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՄ 17 «Ապահովագրության պայմանագրեր»
- Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՄ 16 փոփոխություններ)
- Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՖՀՄՄ 3 փոփոխություններ)
- Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՄ 37 փոփոխություններ)
- 2018-2021թթ. ՖՀՄՄ-ների տարեկան բարեփոխումներ-(ՖՀՄՄ 1, ՖՀՄՄ 9, ՀՀՄՄ 41, ՖՀՄՄ 16 փոփոխություններ):
- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՄ 1 փոփոխություններ)

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2021թ. դեկտեմբերի 31-ի	2020թ. դեկտեմբերի 31-ի
Ռուբլի	6.42	7.02
ԱՄՆ դոլար	480.14	522.59
Եվրո	542.61	641.11

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Այս ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է այնպես, ինչպես որ նմանատիպ հիմնական միջոցների մաշվածությունը, երբ դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ միասին: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը, հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, շինություններ	- 20 տարի
Համակարգչային տեխնիկա	- 1 տարի
Մեքենաներ, սարքավորումներ	- 1-10 տարի
Արտադրական, տնտեսական գույք	- 1-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 1-10 տարի:

3.3 Հիմնական միջոցների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է , ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.4 Վարձակալված ակտիվներ

Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում են այլ ակտիվի ինքնարժեքում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ճանաչվում են իրականացման պահին:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին՝ մուտք, առաջին՝ էլք մեթոդը և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում

դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Ընկերության ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

IV. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

V. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

VI. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները ճանապարհին:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,

գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը, փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

II. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.8 Մեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

3.11 Հասույթի ճանաչում

Հասույթը հիմնականում ստացվում է ոգելից խմիչքների վաճառքից՝ շամպայն, օղի, գինի, կոնյակ:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են:

4 Հիմնական միջոցներ

	Հոդամասեր	Շենքեր և շինություններ	Մեքենաաարքավորումներ տրանսպորտային միջոցներ արտադրական և տնտեսական գույք	Շահագործման չհանձնված հիմնական միջոցներ	Անավարտ ոչ ընթացիկ	Ֆինանսական վարձակալությամբ ՀՄ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>							
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	2,084,647	315,998	637,436	13,492	12,898	-	3,064,471
Ավելացում	-	-	-	7,266	-	-	7,266
Վերադասակարգում	-	-	7,266	(7,266)	-	-	-
Օտարում	-	-	(2,002)	-	-	-	(2,002)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,084,647	315,998	642,700	13,492	12,898	-	3,069,735
Ավելացում	-	-	-	698	-	4,950	5,648
Վերադասակարգում	-	-	698	(698)	-	-	-
Օտարում	-	-	(5,289)	-	-	-	(5,289)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,084,647	315,998	638,109	13,492	12,898	4,950	3,070,094
<i>Կուտակված մաշվածություն</i>							
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	288,936	606,790	-	-	-	895,726
Տարվա ծախս	-	7,814	15,987	-	-	-	23,801
Օտարումից դուրս գրում	-	-	(2,002)	-	-	-	(2,002)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	296,750	620,775	-	-	-	917,525
Տարվա ծախս	-	5,385	12,342	-	-	-	17,727
Օտարումից դուրս գրում	-	-	(4,844)	-	-	-	(4,844)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	302,135	628,273	-	-	-	930,408
<i>Հաշվեկշռային արժեք</i>							
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,084,647	19,248	21,925	13,492	12,898	-	2,152,210
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,084,647	13,863	9,836	13,492	12,898	4,950	2,139,686

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցներից գրավադրված են "ԱԿԲԱ բանկ" Բաց Բաժնետիրական Ընկերությունում և "Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա" ՈւՎԿ ՓԲԸ-ում:

Մաշվածության գծով ծախսը 17,727 հազ. դրամից (2020թ.՝ 23,801 հազ. դրամ), 17,552 հազ. դրամը բաշխվել է ինքնարժեքին (2020թ.՝ 23,625 հազ. դրամ), 175 հազ. դրամ վարչական ծախսերին (2020թ.՝ 176 հազ. դրամ):

4,950 հազ. դրամն իրենից ներկայացնում է ԱԳԲԱ Լիզինգ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ից ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված JAC J4 մակնիշի մարդատար ավտոմեքենան:

5. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում

Հազար դրամ

	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	50	50
Տարեվերջի մնացորդ	50	50

"Հայէկոնոմբանկ" ՓԲԸ-ում կատարված ներդրումները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ նշված գործիքի համար արդյունավետ շուկայի բացակայության պատճառով:

6. Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	14076	3,385
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում	738	10,691
Տարեվերջի մնացորդ	14,814	14,076

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2021թ. հունվարի 1	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում մ ճանաչված	2021թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Արձակուրդի պահուստ	3,198	492	3690
Հարկային վնաս	10,878	246	11,124
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	14,076	738	14,814

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2020թ. հունվարի 1	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2020թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Արձակուրդի պահուստ	3,385	(187)	3,198
Հարկային վնաս	-	10,878	10,878
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	3,385	10,691	14,076

7. Պաշարներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	150,259	149,408
Տարա և տարանյութեր	79,097	79,595
Անավարտ արտադրություն	1,756,887	1,897,801
Պատրաստի արտադրանք	40,985	45,180
Ապրանքներ	1,974	416
	2,029,202	2,172,400

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը "Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա" ՈւՎԿ ՓԲԸ-ի և "ԱԿԲԱ բանկ" ԲԲԸ-ի հետ կնքված վարկային պայմանագրերի ապահովման համար գրավադրել է ընկերության շրջանառու միջոցները:

8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	620,496	651,023
Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	(267,548)	(267,548)
Տրված կանխավճարներ	25,866	8,029
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	-	-
Այլ դեբիտորական պարտքեր	1,479	58
	<u>380,293</u>	<u>391,562</u>

Ապրանքների իրացումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 185 օր (2019թ.՝ 274 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	267,548	62,547
Տարվա ընթացքում պահուստի աճ/նվազում	-	205,001
Դեբիտորական պարտքի դուրս գրում	-	-
Տարեկերջի մնացորդ	<u>267,548</u>	<u>267,548</u>

Ղեկավարությունը հավատացած է, որ ստեղծված կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից գատ լրացուցիչ պահուստ չի պահանջվում:

9. Դրամական միջոցներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	367	781
Մնացորդներ բանկերում ՀՀ դրամով	245	5,991
Մնացորդներ բանկերում արտարժույթով	2	2
	<u>614</u>	<u>6,774</u>

10. Մեփական Կապիտալ

10.1 Բաժնետիրական կապիտալ

Հայտարարված բաժնեմասեր	2021թ.	2020թ.
Հասարակ անվանական բաժնետոմս 4000 դրամ յուրաքանչյուրը	<u>222,183</u>	<u>222,183</u>

Բաժնետեր	2021թ.		2020թ.	
	բաժնեմաս ը (հազ. դրամ)	բաժնեմաս ի չափը (%)	բաժնեմաս ը (հազ. դրամ)	բաժնեմաս ի չափը (%)
Վերսանդիկ Ֆրանսիկի Հակոբյան	348,128	39.2	348,128	39.2
Հրայր Ֆրանսիկի Հակոբյան	349,208	39.3	349,208	39.3
Ֆիամետ Ֆրանսիկի Հակոբյան	57,012	6.4	57,012	6.4
Այլ (5%-ից ցածր)	<u>134,384</u>	<u>15.1</u>	<u>134,384</u>	<u>15.1</u>

888,732	100.00	888,732	100.00
---------	--------	---------	--------

10.2 Շահաբաժիններ

Ընկերությունը 2021թ. չի վճարել շահաբաժին:

10.3 Պահուստային կապիտալ

Ընկերությունը կուտակված շահույթի հաշվին ստեղծել է պահուստային կապիտալ, որը կարգավորված է ընկերության կանոնադրությամբ: Պահուստային կապիտալը 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 390,587 հազ.դրամ (2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 390,587 հազ.դրամ):

11. Ակտիվներին վերաբերվող շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհների շարժը ներկայացված է ստորև՝

Հազար դրամ

	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	936,145	1,040,161
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	(104,017)	(104,016)
Տարեվերջի մնացորդ	832,128	936,145

Ակտիվներին վերաբերող շնորհները վերաբերում են 2005թ. Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում կատարված փոփոխության արդյունքում Ընկերությանը սեփականության իրավունքով փոխանցված հողամասերի շուկայական և կադաստրային արժեքների տարբերության գումարին:

2012թ. ապրիլին իրականացվել է հողամասերի շուկայական արժեքի գնահատում՝ անկախ գնահատող "ԷՅ ԷՆԴ ԷՍ ՖԱՅՆԵՆՇԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ" ՓԲԸ գնահատման գործակալության կողմից 2010թ. հունվարի 1-ի դրությամբ: 2012թ. հողամասերը գնահատվել են 2,084,647 հազ. դրամ: Հողամասերի շուկայական (գուտ) արժեքի և կադաստրային արժեքի տարբերության չափով կատարվել է ակտիվներին վերաբերող շնորհի գումարի ճշգրտում:

12. Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Վարկեր	546,972	105,161	318,284	887,005
Փոխառություններ	581,116	573,858	-	-
	1,128,088	679,019	318,284	887,005

Վարկեր

"Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա" ՈՒՎԿ ՓԲԸ

1. 26.07.2017թ. "Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա" ՈՒՎԿ ՓԲԸ-ից թիվ 909303Վ վարկային պայմանագրով ստացել է 200,000 հազ. դրամ վարկ: Տարեկան 11% տոկոսադրույքով, 60 ամիս մարման ժամկետով: Վարկը տրամադրվել է շրջանառու միջոցների համալրման համար: Որպես վարկի ապահովման միջոցներ են հանդիսանում՝ 2 անշարժ գույք և թվով երկու երաշխավորություն: 31.12.17թ. դրությամբ մնացորդը կազմում է 200,000 հազ. դրամ, որից 2018թ.-ի ընթացքում մարվել է 33,333 հազ. դրամ: 2019թ.-ի ընթացքում մարվել է 44,445 հազ. դրամ: 2020թ.-ի ընթացքում մարվել է 27,625 հազ. դրամ: 2021թ.-ի ընթացքում մարվել է 54,056 հազ. դրամ: 31.12.2021թ. վարկի մնացորդը կազմում է 40,542 հազ. դրամ:

2. 05.06.2018թ. "Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա" ՈՒՎԿ ՓԲԸ-ից թիվ 909348Վ001 վարկային պայմանագրով նախատեսվում է ստանալ 400,000 հազ. դրամ վարկ, որից 2018թ.-ի ընթացքում ստացել է 50,000 հազ. դրամ վարկ, տարեկան 11% տոկոսադրույքով, մինչև 05.06.2028թ մարման ժամկետով: Վարկը տրամադրվել է մթերված ապրանքների դիմաց վճարումներ իրականացնելու նպատակով: Որպես վարկի ապահովման միջոցներ են հանդիսանում՝

ՀՀ ք. Երևան, Մաշտոց պողոտա, 14 շենք, 60 տարածքի հասցեում՝ 133.7 քմ մակերեսով տարածքը և ՀՀ ք. Երևան, Ագաթանգեղոսի փողոց, 7 շենք, 272 տարածքի հասցեում՝ 514.6 քմ մակերեսով տարածքը և 0.35389 հա, որը հանդիսանում է ՀՀ քաղաքացի Հրայր Ֆրանսիկի Հակոբյանի սեփականությունը, և թվով երկու երաշխավորություն՝ կողմերի և Ֆիսմետա Հակոբյանի միջև կնքված թիվ 909348Ե/01, կողմերի և Ֆիսմետա Հակոբյանի միջև կնքված թիվ 909348Ե /02 երաշխավորության պայմանագրերը: 2020թ.-ի ընթացքում մարվել է 13,733 հազ. դրամ: **31.12.2021թ. դրությամբ վարկը ամբողջությամբ մարված է:**

3. 04.11.2020թ. "Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա" ՈՒՎԿ ՓԲԸ-ից **թիվ 909463Վ** վարկային պայմանագրով նախատեսվում է ստանալ 150,000 հազ. դրամ չվերականգնվող վարկային գիծ, Վարկը տրամադրվել է մթերված ապրանքների դիմաց վճարումներ իրականացնելու նպատակով: Որպես վարկի ապահովման միջոցներ են հանդիսանում՝ թվով մեկ անշարժ գույքով, 25,200 դեկալիտր քանակով կոնյակի սպիրտով և թվով մեկ երաշխավորությամբ՝ համաձայն 04.11.2020թ.-ին կողմերի և Հրայր Ֆրանսիկի Հակոբյանի միջև կնքած թիվ 909463Գ/01 Անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրի, կողմերի միջև կնքած թիվ 909463Գ/02 Կոնյակի սպիրտի կոշտ գրավի պայմանագրի, կողմերի և Հրայր Ֆրանսիկի Հակոբյանի միջև կնքած թիվ 909463Ե երաշխավորության պայմանագրերը: 2021թ. ընթացքում մարվել է 50,000 հազ. դրամ: **31.12.2021թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 100,000 հազ. դրամ:**

4. 05.06.2018թ.-ին կնքված **թիվ 909348** գլխավոր վարկային պայմանագրի ենթապայմանագիր **թիվ 909348Վ/005** 18.08.2020թ. կնքած վարկային պայմանագրով "Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա" ՈՒՎԿ ՓԲԸ-ից նախատեսվում է ստանալ 97,400 հազ. դրամ վարկ, Տարեկան 11.3% տոկոսադրույքով, 60 ամիս մարման ժամկետով: Վարկի առաջին 24 ամսվա տոկոսադրույքն ամբողջությամբ սուբսիդավորվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված միջոցներով՝ հիմք ընդունելով վարկատուի և Նախարարության միջև 07.05.2020թ. կնքած Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ պայմանագիրը և Վարկատուի ու ՀՀ Կենտրոնական բանկի միջև 14.04.2020թ. կնքված թիվ SME-Cor-I Գլխավոր վարկային պայմանագրի պահանջները: 31.12.2021թ. ընթացքում մարվել է 19,841 հազ. դրամ: **31.12.2021թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 77,559 հազ. դրամ:**

5. 05.06.2018թ.-ին կնքված **թիվ 909348** գլխավոր վարկային պայմանագրի ենթապայմանագիր **թիվ 909348Վ/006** 08.10.2020թ. կնքած վարկային պայմանագրով "Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա" ՈՒՎԿ ՓԲԸ-ից նախատեսվում է ստանալ 50,000 հազ. դրամ վարկ, Տարեկան 11.3% տոկոսադրույքով, 60 ամիս մարման ժամկետով: Վարկի առաջին 24 ամսվա տոկոսադրույքն ամբողջությամբ սուբսիդավորվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված միջոցներով՝ հիմք ընդունելով վարկատուի և Նախարարության միջև 07.05.2020թ. կնքած Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ պայմանագիրը և Վարկատուի ու ՀՀ Կենտրոնական բանկի միջև 14.04.2020թ. կնքած թիվ SME-Cor-I Գլխավոր վարկային պայմանագրի պահանջները: 2021թ. ընթացքում մարվել է 9,259 հազ. դրամ: **31.12.2021թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 40,741 հազ. դրամ:**

6. 05.06.2018թ.-ին կնքված **թիվ 909348** գլխավոր վարկային պայմանագրի ենթապայմանագիր **թիվ 909348Վ/007** 08.10.2020թ. կնքած վարկային պայմանագրով "Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա" ՈՒՎԿ ՓԲԸ-ից նախատեսվում է ստանալ 188,000 հազ. դրամ վարկ, Տարեկան 12% տոկոսադրույքով, 24 ամիս մարման ժամկետով: Վարկի տոկոսադրույքն ամբողջությամբ սուբսիդավորվում է Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի գյուղական կառույցի կողմից տրամադրված միջոցներով՝ հիմք ընդունելով վարկատուի և Գ.ՖԿ-ի միջև 30.04.2019թ. կնքած ՎՊ/-19 պայմանագիրը: 2021թ. ընթացքում մարվել է 104,444 հազ. դրամ: **31.12.2021թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 83,555 հազ. դրամ:**

7. 05.06.2018թ.-ին կնքված **թիվ 909348** գլխավոր վարկային պայմանագրի ենթապայմանագիր **թիվ 909348Վ/008** 28.07.2021թ. կնքած վարկային պայմանագրով "Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա" ՈՒՎԿ ՓԲԸ-ից նախատեսվում է ստանալ 98,000 հազ. դրամ վարկ, Տարեկան 11.3% տոկոսադրույքով, 60 ամիս մարման ժամկետով: Համաձայն 28 հոլիսի 2021թ. կնքվել է երաշխավորության պայմանագրի համաձայնագիր, համաձայն որի կնքած համաձայնագրի բոլոր պարտավորությունների կատարումն ամբողջությամբ ապահովվում է համաձայն 05/06/2018թ. կնքած թիվ 909348Գ/01 անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրի, 05/06/2018թ. կնքած թիվ 909348Գ/02 անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրի, 05/06/2018թ. կնքած թիվ 909348Գ/01 երաշխավորության պայմանագրի, 05/06/2018թ. կնքած թիվ 909348Գ/02

երաշխավորության պայմանագրի: **31.12.2021թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 98,000 հազ. դրամ:**

8. 05.06.2018թ.-ին կնքված **թիվ 909348** գլխավոր վարկային պայմանագրի ենթապայմանագիր **թիվ 909348Վ/009** 13.12.2021թ. կնքած վարկային պայմանագրով "Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա" ՈՒՎԿ ՓԲԸ-ից նախատեսվում է ստանալ 100,000 հազ. դրամ վարկ, Տարեկան 9,5% տոկոսադրույքով, 36 ամիս մարման ժամկետով: Վարկը տրամադրվում է խաղողի մթերման գծով կրեդիտորական պարտքի մարման նպատակով: **31.12.2021թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 100,000 հազ. դրամ:**

"ԱԿԲԱ ԲԱՆԿ" ԲԲԸ

1. 16.11.2020թ. Ակբա բանկ ՓԲԸ-ից **N 20460494304/01** վարկային պայմանագրով ստացել է 134,000 հազ. դրամ վարկ, տարեկան 11% տոկոսադրույքով, մինչև 20.11.2023թ մարման ժամկետով: 2021թ.-ի ընթացքում մարվել է 40,205 հազ. դրամ: **31.12.2021թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 90,698 հազ. դրամ:**

2. 25.12.2020թ. Ակբա բանկ ՓԲԸ-ից **N 20460494304/03** վարկային պայմանագրով ստացել է 69,000 հազ. դրամ վարկ, տարեկան 13,5 % տոկոսադրույքով, մինչև 23.12.2022թ մարման ժամկետով: 2021թ.-ի ընթացքում մարվել է 21,506 հազ. դրամ: **31.12.2021թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 47,494 հազ. դրամ:**

31.12.2021թ. դրությամբ ԱԿԲԱ բանկ ԲԲԸ-ի վարկի մնացորդը կազմում է 138,192 հազ. դրամ:

"ՎՏԲ-Հայաստան բանկ" ՓԲԸ

1. 22.12.2020թ. "ՎՏԲ-Հայաստան բանկ" ՓԲԸ-ից **N 062-020-02Ա** վարկային պայմանագրով ստացել է վարկ 196,000 հազ. դրամ, 13.1% տոկոսադրույքով 24 ամիս ժամկետով: Վարկը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարներն ամբողջությամբ ենթակա են մարման 22.12.2022թ.՝ պայմանագրում ներկայացված ժամանակացույցի համաձայն: Վարկի տոկոսների հաշվարկը կատարվում է վարկի գումարի փաստացի օգտագործված օրերի համար, տարին ընդունելով 365 օր: 2021թ. ընթացքում մարվել է 65,333 հազ. դրամ: **31.12.2021թ. դրությամբ մնացորդը կազմում է 130,667 հազ. դրամ:**

2. 22.12.2021թ. "ՎՏԲ-Հայաստան բանկ" ՓԲԸ-ից **N 062-021-01Ա** վարկային պայմանագրով ստացել է վարկ 56,000 հազ. դրամ, 13.1% տոկոսադրույքով 36 ամիս ժամկետով: Վարկը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարներն ամբողջությամբ ենթակա են մարման 22.12.2024թ.՝ պայմանագրում ներկայացված ժամանակացույցի համաձայն: Վարկի տոկոսների հաշվարկը կատարվում է վարկի գումարի փաստացի օգտագործված օրերի համար, տարին ընդունելով 365 օր: **31.12.2021թ. դրությամբ մնացորդը կազմում է 56,000 հազ. դրամ:**

31.12.2021թ. դրությամբ "ՎՏԲ-Հայաստան բանկ" ՓԲԸ-ի վարկի մնացորդը կազմում է 186,667 հազ. դրամ:

Փոխառություններ

"Արմենիա Ինթերնեյշնլ Էյրվեյս" ՓԲԸ

"Արմենիա Ինթերնեյշնլ Էյրվեյս" ՓԲԸ - կողմից 2007թ-ին տրամադրվել է 220,000 հազ.դրամի անտոկոս փոխառություն, մինչև 2014թ. հոկտեմբերի 24-ը: 31 դեկտեմբերի 2014թ. դրությամբ փոխառության մնացորդը կազմում է 162,000 հազ.դրամ, որը ենթակա է մարման 2015թ. հունվարի 10-ին: 12 հունվարի 2015թ. կողմերի միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի վճարման ժամկետը երկարաձգվել է մինչև 10 հունվարի 2018թ.: 10 հունվարի 2018թ. կողմերի միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի վճարման ժամկետը երկարաձգվել է մինչև 10 հունվարի 2020թ.: 10 հունվարի 2020թ. Կողմերի միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի վճարման ժամկետը երկարաձգվել է մինչև 10/01/2023թ.:

31.12.2021թ. դրությամբ փոխառության մնացորդը կազմում է 94,700 հազ. դրամ:

Հակորյան Վերսանդիկ

Ընկերությունը 2019թ. Վերսանդիկ Հակոբյանից ստացել է 396,365 հազ. դրամ անտոկոս փոխառություն, 3 տարի մարման ժամկետով:

31.12.2021թ. դրությամբ փոխառության մնացորդը կազմում է 394,292 հազ. դրամ:

Հրայր Հակոբյան

Ընկերությունը համաձայն 24 հուլիս 2020թ. փոխառության պայմանագրի Հրայր Հակոբյանից անժամկետ ստացել է 8,000 հազ. դրամ անտոկոս փոխառություն:

Ընկերությունը համաձայն 04 դեկտեմբեր 2020թ. փոխառության պայմանագրի Հրայր Հակոբյանից անժամկետ ստացել է 3,830 հազ. դրամ անտոկոս փոխառություն:

Ընկերությունը համաձայն 16 նոյեմբեր 2021թ. փոխառության պայմանագրի Հրայր Հակոբյանից անժամկետ ստացել է 270 հազ. դրամ անտոկոս փոխառություն:

Ընկերությունը համաձայն 27 օգոստոս 2021թ. փոխառության պայմանագրի Հրայր Հակոբյանից անժամկետ ստացել է 1,500 հազ. դրամ անտոկոս փոխառություն:

Ընկերությունը համաձայն 04 դեկտեմբերի 2021թ. փոխառության պայմանագրի Հրայր Հակոբյանից անժամկետ ստացել է 5,000 հազ. դրամ անտոկոս փոխառություն:

Ընկերությունը համաձայն 02 նոյեմբերի 2021թ. փոխառության պայմանագրի Հրայր Հակոբյանից անժամկետ ստացել է 712 հազ. դրամ անտոկոս փոխառություն:

2021թ. ընթացքում փոխառությունից մարվել է 3,325 հազ. դրամ: **31.12.2021թ. դրությամբ փոխառության մնացորդը կազմում է 9,987 հազ. դրամ:**

Ֆիամետա Հակոբյան

Ընկերությունը համաձայն 24 մարտ 2020թ. փոխառության պայմանագրի Ֆիամետա Հակոբյանից ստացել է 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք 53,068 հազ. դրամ անտոկոս փոխառություն, 2 տարի մարման ժամկետով:

31.12.2021թ. ընթացքում մարվել է 4,721 հազ. դրամ: **31.12.2021թ. դրությամբ փոխառության մնացորդը կազմում է 48,111 հազ. դրամ:**

Լարինա ՍՊԸ

Ընկերությունը համաձայն 20 նոյեմբեր 2020թ. փոխառության պայմանագրի Լարինա ՍՊԸ-ից ստացել է 1,700 ռուբլուն համարժեք 12,070 հազ. դրամ փոխառություն մինչև 19 նոյեմբեր 2021թ.:

Ընկերությունը համաձայն 24 հունվարի 2021թ. փոխառության պայմանագրի Լարինա ՍՊԸ-ից ստացել է 1,200 ռուբլի փոխառություն մինչև 28 հունվարի 2022թ.:

Ընկերությունը համաձայն 12 մայիսի 2021թ. փոխառության պայմանագրի Լարինա ՍՊԸ-ից ստացել է 1,500 ռուբլի փոխառություն մինչև 11 մայիսի 2022թ.:

Ընկերությունը համաձայն 09 սեպտեմբերի 2021թ. փոխառության պայմանագրի Լարինա ՍՊԸ-ից ստացել է 1,000 ռուբլի փոխառություն մինչև 08 սեպտեմբեր 2022թ.:

31.12.2021թ. դրությամբ մնացորդը կազմում է 34,026 հազ. դրամ կամ 5,300,000 ռուբլի:

Դ-Լ777 Գրուպ ՍՊԸ

Ընկերությունը համաձայն 10 մայիսի 2019թ. փոխառության պայմանագրի Դ-Լ777 Գրուպ ՍՊԸ-ից ստացել է 14,640 հազ. դրամ անտոկոս փոխառություն մինչև 30 դեկտեմբեր 2021թ.:

31.12.2020թ. դրությամբ մնացորդը կազմում է 14,640 հազ. դրամ: **31.12.2021թ. փոխառությունը մարված է:**

13. Ֆինանսական վարձակալություն

Ընկերությունը 2021թ. դեկտեմբերի 06-ին 'Ագրա Լիզինգ' վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի հետ կնքել է թիվ EVM 21-04 Ֆինանսական վարձակալության (Լիզինգի) պայմանագիրը, որով Վարձատուն պարտավորվում է ձեռք բերել և Ընկերությանը օգտագործման նպատակով

տրամադրել 1 հատ 4,950 դրամ արժեքով JAC J4 մոդելի մակնիշի ավտոմեքենա, տարեկան՝ 13.50% տոկոսադրույքով, 4 տարի ժամկետով:

14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	81,910	106,158
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	6,691	24,123
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	23,694	79,140
Զօգուագործված արձակուրդի գծով պահուստ	88,353	17,765
Կրեդիտորական պարտքեր մասնակիցներին	20,502	8,483
Ստացված կանխավճարներ	8,143	-
	81	235,669

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 29 օր (2020թ.՝ 48 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

15. Հասույթ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շամպայնի իրացում	872,125	637,373
Օդու իրացում	47,029	30,690
Գինու իրացում	135,420	100,565
Կոնյակի իրացում	65,138	70,265
Այլ խմիչքներ իրացում	69,390	17,027
Այլ	32,730	10,870
	1,221,832	866,790

16. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հումք	427,569	363,529
Տարա	262,142	104,569
Աշխատավարձ	237,387	257,720
Մաշվածություն	17,552	23,625
Կոմունալ ծախսեր	52,453	44,349
Վարձակալություն	5,400	-
Ապրանք	2,544	1,309
Տրանսպորտի սպասարկում	9,173	15,458
Գործուղման ծախսեր	2,372	168
Այլ	3,192	235
	1,019,784	810,962

17. Այլ եկամուտներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներին վերաբերվող շնորհներից	104,017	104,016
Եկամուտների վերաբերվող շնորհներից	-	39,438
Գործառնական վարձակալությունից	13,630	12,372
ՀՄ վաճառքից եկամուտ	1,250	441
Պաշարների վաճառքից եկամուտ	1,390	469
Այլ	2,130	1,611
	<u>122,417</u>	<u>158,347</u>

18. Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարկերի գծով տոկոսներ, զուտ	20,544	34,333
Զուտ ֆինանսական ծախսեր	<u>20,544</u>	<u>34,333</u>

19. Այլ ֆինանսական հոդվածներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը</i>		
Դրամական միջոցներ	(116)	(135)
Դեբիտորական պարտքեր	(28,686)	(22,338)
Փոխառություններ	21,808	(3,530)
Կրեդիտորական պարտքեր	1,412	(158)
	<u>(5,582)</u>	<u>(26,161)</u>

20. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ (տես՝ ծանոթագրություն 6)	(738)	(10,691)
	<u>(738)</u>	<u>(10,691)</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Ծախս/վնաս մինչև հարկումը	52,315		(289,864)	
Ծախսահարկ՝ 2021թ.՝ 18 % դրույքաչափով, (2020թ.՝ 18 %)	9,417	18.00	(52,176)	(18.00)
Զնվագեցվող ծախսի ազդեցությունը	(10,155)	(19.41)	41,485	14.31
Ծախսահարկի գծով ծախս	<u>(738)</u>	<u>(1.41)</u>	<u>(10,691)</u>	<u>(3.69)</u>

21. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Տարվա շահույթ/վնաս	53053	(279,173)
Հասարակ բաժնետոմսերի միջին քանակ	222,183	222,183
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ/վնաս դրամներով	239	(126)

22. Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Ընկերության ղեկավարությունը գնահատել է հիմնական միջոցների օգտակարության ժամկետները 20 տարի շենքեր, շինություններ, 1-10 տարի մեքենաների և սարքավորումների, 1-10 տարի արտադրական և տնտեսական գույքերի, 1-10 տարի Տրանսպորտային միջոցների և 1 տարի համակարգչային տեխնիկայի համար: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Ընկերության ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

Հետաձգված հարկի գնահատում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 6-ում, 2021թ.-ին 14,814 հազ. դրամի (2020թ.` 14,076 հազ. դրամ) հետաձգված հարկեր են ճանաչվել: Հետաձգված հարկային ակտիվներն ավելանում են արձակուրդի պահուստից և հարկային վնասից: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ Ընկերությունը ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային ակտիվները: Եթե Ընկերությունը ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:

23. Ֆինանսական գործիքներ

23.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության, և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

23.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Դեբիտորական պարտքեր</i>		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	50	50
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	621,975	651,081
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	614	6,774
	<u>622,589</u>	<u>657,905</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	3960	-
Վարկեր և փոխառություններ	1,446,372	1,566,024
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	134,330	156,529
	<u>1,584,662</u>	<u>1,722,553</u>

24. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

24.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, տոկոսադրույթային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

բ) Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա ձեռքբերումներից և վարկային գործարքներից: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկվում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հոդված 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի	Ընդամենը
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	44,879	236,244	3,546	284,669
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	2	-	-	2
	44,881	236,244	3,546	284,671
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Փոխառություններ	48,111	34,026	-	82,137
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	9,259	8,086	17,345
	48,111	43,285	8,086	99,482
Զուտ արդյունք	(3,230)	192,959	(4,540)	185,189
Հոդված 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի	Ընդամենը
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	59,924	9,785	265,785	335,494
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	2	-	-	2
	59,926	9,785	265,785	335,496
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Փոխառություններ	(52,325)	-	(12,070)	(64,395)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	(7,518)	(7,526)	(15,044)
	(52,325)	(7,518)	(19,596)	(79,439)
Զուտ արդյունք	7,601	2,267	246,189	256,057

Ընկերությունը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի, ԵՎՐՈ և ՌԴ ռուբլու փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, ԵՎՐՈ և ՌԴ ռուբլու նկատմամբ դրամի 10% (2020թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2020թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2020թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		ՌԴ ռուբլու ազդեցություն	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	(323)	760	19,296	227	(454)	24,619

զ) Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

դ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

ե) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

25. Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

26. Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով: Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 12- ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա: Հաշվարկը ներկայացվում է ստորև.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	2,053,027	1,999,974
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(614)	(6,774)
Կապիտալ	2,052,413	1,993,200
Ընդհանուր սեփական կապիտալ	2,053,027	1,999,974
Վարկեր և փոխառություններ	1,446,372	1,566,024
Ընդհանուր ֆինանսավորում	3,499,399	3,565,998
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.59	0.56

27. Պայմանականություններ

27.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համավարակ: Կորոնավիրուսն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Ընկերությունը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեյջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

27.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է: Ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանի Հանրապետությունում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը՝ իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Ընկերության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

27.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր: Վերոհիշյալ հանգամանքները կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

28. Հետհաշվեկշռային իրադարձություններ

Ընկերությունը տնտեսական ու առևտրային կապեր ունի Ռուսաստանում և Ուկրաինայում գործող ընկերությունների հետ: Հակամարտության արդյունքում հնարավոր է

- Մատակարարումների ընդհատում
- Առևտրական ու տնտեսական գործունեության սահմանափակումներ
- Ճանապարհորդության սահմանափակումներ:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

29. Գործարքներ կապակցված կողմերի միջև

29.1 Վերահսկողություն

Ընկերության վերջնական վերահսկող են համարվում Վերսանդիկ Ֆրանսիկի Հակոբյանը և Հրայր Ֆրանսիկի Հակոբյանը:

29.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը,

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ,	35,049	37,043
	35,049	37,043